

**Դասավանդող Անահիտ Եղյանի գործունեության գնահատում:  
2017-2018 ուսարի**

**Դպրոցների ղեկավարների կարծիքը**

***Տաթև Աբրահամյան***

Անահիտ Եղյանը 2016-2017 ուսումնական տարում Արևմտյան դպրոցում ունեցել է 8 ժամ, դասավանդել է 4-5-րդ դասարաններում: Իրականացրել են մի շարք նախագծեր, որոնցից, կարծում եմ, ավելի հետաքրքիր էին [„Տյուրաբիում„](#) և [„Նորաոճ թաղարներ„](#) նախագծերը: Անահիտ Եղյանի բլոգում հավաքված են անցած ուսումնական տարվա նախագծերը, արդյունքները` ([anahiteghyan.wordpress.com/page/7/](http://anahiteghyan.wordpress.com/page/7/)): Դրանք հիմնականում իր պատումներն են և տեղադրված են իր բլոգում, նախագծերի ընթացքը, արդյունքները սովորողների բլոգներում շատ քիչ է երևում: Ճամփորդական նախագծեր շատ է իրականացրել, նախագծերը երբեմն չէին համապատասխանում ուսումնական ճամփորդության կարգին: Բակի բարեկարգման աշխատանքների նախագիծ Անահիտը չի իրականացրել. կարծում եմ, որ բնագիտությունը չի կարող սահմանափակվել միայն 45 րոպեով և ընդգրկել միայն դասասենյակը: Արևմտյան դպրոցում ունենք կենդանական անկյուններ, որոնց խնամքը, որպես նախագիծ, պետք է իրականացնեն հիմնականում բնագետ դասավանդողը և սովորողները: Նաև կարծում եմ, որ նույն ճամփորդությունները գոնե բնագիտական ուղղվածություն պետք է ունենան, նախագծերում դա պետք է ավելի հստակ երևար: Քանի որ Անահիտը աշխատում էր նաև կրթահամալիրի քոլեջում և Հյուսիսային դպրոցում, Արևմտյան դպրոցում լինում էր միայն երկու օր, մինչև 12: 30, այդ ժամանակահատվածում չէր հասցնում բակային նախագծեր իրականացնել:

Հարկ եմ համարում ասել նաև, որ Արևմտյան դպրոցում կային մի խումբ սովորողներ, ովքեր Անահիտին շատ սիրում էին և անընդհատ ճամփորդում:

***Քնարիկ Ներսիսյան***

Անահիտ Եղյանը ունի սովորություն իր անելիքները չքննարկելու, չհամաձայնեցնելու: Դեռ նախորդ տարի դրա շուրջ ունեցել եմ լարվածություն: Այս տարրի ևս եղավ նախադեպ Քոլեջի ուսանողների հետ ուսումնական ճամփորդություն կազմակերպելու վերաբերյալ:

Անահիտը այս տարի իմ առաջարկով, որը ստացել էի կրթահամալիրի տնօրենից, հանդես եկավ [Կոմպոստ](#) նախագծով: Պատրաստվում է նաև «Կանաչ ցանկապատ» և «Կանաչ անցուղիներ» նախագծերը ներկայացնելուն, կազմակերպելուն:

***Նվարդ Մարգարյան***

Անահիտ Եղյանը ներկայացրել է տարվա ընթացքում իր կողմից իրականացվող նախագծերի հղումները, բլոգը միշտ եղել է ակտիվ վիճակում: Բացակայությունների մասին նախապես տեղեկացրել է նամակով: Քոլեջի ուսանողների հետ իրականացրել է 3 ուսումնական ճամփորդություն: Ուսանողները միշտ սիրով են մասնակցել ճամփորդություններին, դասերին:

Շողիկ Պողոսյանի հետ համատեղ ղեկավարել է մի շարք նախագծեր, կիրակնօրյա եթերի հեռարձակում: Իրականացրել է պարտեզապուրակային, ներքին կանաչ ձևավորման աշխատանքներ:

Նախագծերը, անհատական ուսումնական պլանը միշտ ներկայացրել է ժամանակին:  
Ընդհանուր առամբ, դժգոհություններ չեն ունեցել: